

**ՀՀ Արագածոտնի փոխմարզպետ Նունե Մովսիսյանի ելույթը Արագածոտնի  
մարզում << Ագրոլոգ>> օրգանական ուսումնասիրտադրական  
կենտրոնի բացման ժամանակ**

**30.06.2017թ.**

Ողջունում եմ բոլոր ներկաներին: Այսօր Արագածոտնի մարզում, ԵՄ-ի ֆինանսավորմամբ և Ավստրիական զարգացման գործակալության համաֆինանսավորմամբ, օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնության դրամաշնորհային խոշոր ծրագրերից մեկի <<Ագրոլոգ>> օրգանական ուսումնասիրտադրական կենտրոնի բացման առիթով շնորհավորում եմ նախաձեռնողներին և շնորհակալություն հայտնում աջակիցներին:

Կենտրոնը տարածաշրջանում առաջինն է: Օրգանիկ սնունդն առողջ հասարակության կարևոր նախապայման է:

Ժամանակակից շուկայում մեծացել է օրգանիկ սննդի պահանջարկը:

Այս կենտրոնը կկազմակերպի ուսուցում մթերքների արտադրության վերաբերյալ, կբացի նոր աշխատատեղեր, կընդլայնի շուկան ու կնպաստի էկոտուրիզմի զարգացմանը:

Մեր մարզը գյուղատնտեսական է և յուրաքանչյուր ենթակառուցվածքի ուժեղացումը շատ կարևորում ենք:

<< Ագրոլոգ>> կենտրոնի տնօրեն Տիգրան Ծատուրյան , Ձեր սկսած գործը բարի է, և Ձեզ մաղթում եմ բարի աշխատանքային ընթացք:

1.07.2017թ.

## Ծիրանատուն

Արագածոտնի մարզում արդեն յոթերորդ անգամ նշվում է Ծիրանատունը՝ գրող, գեղանկարիչ, Աշտարակի պատվավոր քաղաքացի Արևշատ Ավագյանի նախաձեռնությամբ: Բերքի՝ կեռասի, թթի, ծիրանի, դեղձի, խաղողի, խնձորի, ընկույզի տոները, առիթ են համախմբելու մշակութային գործիչներին մեր մարզում:

Հարգելի պարոն Ավագյան շատ կարևորում ենք Ձեր այս նախաձեռնությունը և հատկապես Ձեր դրական դաշտ ստեղծելու հատկությունը:

Ձեր կոչին տարեց տարի արձագանքում են մշակութային ավելի շատ գործիչներ և մարզում այս օրերը դառնում են տոնական:

Արագածոտնի մարզպետարանը, Թեմի առաջնորդարանը մշտապես Ձեր կողքին է՝ կարևորելով ձեր համախմբող անձի դաստիարակչական օրինակը:

Եղեք առողջ և ձեր նպատակը՝ «Յոթ մուսաների այգում» մշակութային կենտրոն հիմնելու ուղղությամբ, բոլորս միասին կարողանանք իրականություն դարձնել: